

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄ

### ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ուսուցման ժամանակակից մեթոդները և դրանց կիրառումը տարրական  
դպրոցում

Դասվար՝ .....Գևորգյան Հասմիկ Համբարձումի

Ղեկավար՝ .....Շ. Սարգսյան մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ

Գյումրի 2023

## Համառոտագիր

Թեմայի անվանումը՝

**Հայերեն՝** «Ուսուցման ժամանակակից մեթոդները, դրանց կիրառումը տարրական դպրոցում»

Հետազոտական աշխատանքը նվիրված է տարրական դասարաններում օգտագործվող ուսուցման ժամանակակից մեթոդներին: Կրթության նպատակներն իրականացնելու, արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար կարևոր նշանակություն ունի ուսուցման մեթոդների ընտրությունը: Այդ ընտրությունը պարզ է, որ պայմանավորված է մի շարք գործոններով, որոնց մեջ էական նշանակություն է ստանում ժամանակակից մեթոդների կիրառության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից մեթոդների կիրառման գործընթացում առկա հիմնախնդիրների ուսումնասիրությամբ: Մեթոդների ընտրությունը կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսուցման գործընթացի միջոցով: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ուսուցման ժամանակակից մեթոդները և բացահայտել դրանց կիրառման առանձնահատկությունները տարրական դպրոցում: Ուսուցման ժամանակակից մեթոդները ամբողջական են դարձնում դասերը և դրանք դարձնում առավել հետաքրքիր, ընդգրկուն և լիարժեք:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ-----	5
<b>Գլուխ 1 Ուսուցման ժամանակակից մեթոդներ, դրանց բովանդակությունը, ընտրությունը և իրականացումը-----</b>	<b>7</b>
1.1 Ուսուցման ժամանակակից մեթոդի տեղն ու դերը կրթական տեխնոլոգիայում--	7
1.2 Ուսուցման ժամանակակից մեթոդների էությունն ու բովանդակությունը-----	10
1.3 Ուսուցման ժամանակակից մեթոդների ընտրությունը-----	18
<b>Գլուխ 2 Ինտերակտիվ մեթոդներ , ուսուցման ակտիվ մեթոդներ, դրանց կիրառումը տարրական դպրոցում-----</b>	<b>25</b>
2.1 Ուսուցման ինտերակտիվ մեթոդներ, դրանց կիրառումը տարրական դպրոցում-	25
2.2 Ուսուցման ակտիվ մեթոդներ, դրանց կիրառումը տարրական դպրոցում-----	32
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ-----	37
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ-----	38

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու, կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ: Մեթոդների ընտրությունը ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսուցման գործընթացի միջոցով:

Պայմանականորեն ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝ ավանդական և ժամանակակից մեթոդներ: Ավանդական են համարվում բացատրական զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած են պատրաստի տեղեկատվության (գիտելիքի) պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը:

Հետազոտական աշխատանքի թեման ընտրված է այն նպատակադրմամբ, որ ուսումնասիրելու ենք ուսուցման ժամանակակից մեթոդները, դրանց կիրառման հնարավորությունները տարրական դպրոցում: Կրթության նպատակներն իրականացնելու, արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար կարևոր նշանակություն ունի ուսուցման մեթոդների ընտրությունը: Այդ ընտրությունը պարզ է, որ պայմանավորված է մի շարք գործոններով, որոնց մեջ էական նշանակություն է ստանում ժամանակակից մեթոդների կիրառության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Ուսուցման ժամանակակից մեթոդները, դրանց կիրառումը տարրական դպրոցում թեմայի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից մեթոդների կիրառման գործընթացում առկա հիմնախնդիրների ուսումնասիրությամբ:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ուսուցման ժամանակակից մեթոդները և բացահայտել դրանց կիրառման առանձնահատկությունները տարրական դպրոցում:

Նպատակի իրականացման համար մեր առջև դրված են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել ուսուցման ժամանակակից մեթոդները,
- Բացահայտել դրանց կիրառման առանձնահատկությունները տարրական դպրոցում,
- Բացահայտել մեթոդների կիրառման ընթացքում հնարավոր դժվարություններն ու խնդիրները տարրական դպրոցում:

Աշխատանքի իրականացման համար նախատեսված հետազոտական մեթոդներն են՝ թեմային առնչվող մասնագիտական գիտական գրականության ուսումնասիրություն, վերլուծություն, համեմատում, համադրում, սոցիոլոգիական հարցումներ, հարցազրույց, դիտումներ:

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, 2 գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից: Աշխատանքը ներկայացված է 44 էջ համակարգչային շարվածքով:

## Գլուխ 1

### ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐ, ԴՐԱՆՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

#### 1.1. Մեթոդների տեղն ու դերը կրթական տեխնոլոգիայում

Մեթոդը ( հունարեն Methodos` ճանաչողական կամ հետազոտական ճանապարհ, տեսություն, ուսմունք բառից) կոնկրետ խնդիրների լուծման ենթակա իրականության յուրացման գործնական կամ տեսական հնարների կամ գործողությունների համախումբ է: Ուսուցման մեթոդը դասավանդողի և ուսումնառողի կարգավորված փոխկապակցված գործունեության եղանակ է, գործունեության ճանապարհ` ուղղված ուսուցման գործընթացում դրված նպատակների իրականացմանը, խնդիրների լուծմանը<sup>1</sup>:

Կրթական գործունեության նախագծված նպատակների և վերջնական արդյունքների միջև կապող օղակը հանդիսանում է մեթոդը: Այդ պատճառով էլ ուսուցման տեխնոլոգիաներին առնչվող հարցերի հետ համատեղ քննարկման ենթակա են նաև ուսուցման և ուսումնառության մեթոդների ընտրության և կիրառության հիմնախնդիրները: Այդ մեթոդների դասակարգումը և նկարագրումը կարելի է կառուցել այնպես, որ<sup>2</sup>.


- Դրանք կարելի լինի կիրառել ցանկացած դասընթացի դասավանդման ժամանակ,
- Դրանց ընտրությունը հնարավոր լինի կատարել ուսուցման և դիդակտիկ խնդիրների նպատակներին համապատասխան:

Դա նշանակում է, որ ուսուցման տեխնոլոգիայի մշակման ժամանակ դասավանդողը պետք է ինքնուրույն իրականացնի մեթոդների նպատակաուղղված ընտրություն, ինչը հնարավորություն կտա իրականացնել տրված նպատակներին հասնելը երաշխավորող գործունեություն: Ուսումնառողների հետ դասավանդողի

<sup>1</sup> Հայկ Պետրոսյան «Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ» Երևան 2012թ. Էջ 145

<sup>2</sup> Հայկ Պետրոսյան «Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ» Երևան 2012թ. Էջ 147

ուսուցման նպատակների համատեղ իրականացման բարդ գործունեության ընթացքում ուսուցման մեթոդը հանդիսանում է առանցքային միջոց: Դրա մոդելը սխեմատիկ պատկերված է 1-ին նկարում:



Մեթոդներն ապահովում են արդյունքներին հասնելը: Դրանք ձևավորվում են՝ էլնելով նրանից, թե ուսուցման տվյալ հատվածի էլքում ուսումնառողները.

- Ի՞նչ պետք է իմանան,
- Ի՞նչ պետք է կարողանան
- Ի՞նչ արժևորեն ( մոտիվացիան);

Ուսուցման սկզբում դասավանդողի և ուսումնառողների կողմից դրվող նպատակները, որպես կանոն, միարժեք չեն: Այդ պատճառով էլ ամենից առաջ անհրաժեշտ է ուսումնառության նպատակները հասցնել ուսումնառողներին, այսինքն, յուրաքանչյուր ուսումնառող պետք է այդ նպատակները.

- Ըմբռնի և հասկանա,
- Գիտակցի և ամրակայի գիտակցության մեջ,
- Ղեկավարվի դրանցով :

Համատեղ ուսումնական մասնագիտական գործունեությունը կարելի է սկսել, եթե համընկնում են դասավանդողի և ուսումնառողների նպատակները: Այդ դեպքում այն

կկրի ոչ թե սուբյեկտ (ուսումնառող)-օբյեկտային (դասավանդող), այլ սուբյեկտ-սուբյեկտային բնույթ:

Ուսումնառողների ուսումնական մասնագիտական գործունեության կազմակերպման եղանակ են հանդիսանում ուսումնառության մեթոդները, իսկ դասավանդողի աշխատանքային մասնագիտական գործունեության կազմակերպման եղանակներ՝ ուսուցման մեթոդները: Ըստ մանկավարժագիտության գրականության՝ կա <<մանկավարժական տեխնոլոգիա>>, <<կրթական տեխնոլոգիա>> հասկացությունների համարյա 300 ձևակերպում: <<Մանկավարժական տեխնոլոգիա>> հասկացությունը օգտագործվել է դեռևս 1920 թվականից, բայց այսօր էլ մանկավարժագիտության մեջ չկա միանշանակորեն ընդունված պատկերացում<sup>3</sup>:

---

<sup>3</sup> Սերգեյ Մանուկյան «Մանկավարժագիտություն» Երևան 2002թ. Էջ 293



## 1.2. Ուսուցման մեթոդների էությունն ու բովանդակությունը

Ուսուցման ժամանակակից մեթոդները ամբողջական են դարձնում դասերը և դրանք դարձնում առավել հետաքրքիր ու ընդգրկուն: Այդ իսկ պատճառով ցանկալի է, որ ուսուցիչները տիրապետեն դրանցից գոնե մի քանիսին: Ուսուցման ժամանակակից մեթոդներն են<sup>4</sup>

1. Մտավոր գրոհի մեթոդը,
2. Բանալի եզրույթների մեթոդը,
3. Տեքստի նշագրման համակարգի մեթոդը
4. Զույգերով ընթերցման/ամփոփման դասի վերլուծության մեթոդը,
5. Խմբավորման մեթոդը,
6. Հնգյակների մեթոդը,
7. Խորանարդման մեթոդը,
8. Խառնված հերթականությունների մեթոդը,
9. Հինգրոպեանոց շարադրանքի մեթոդը,
10. Գրավոր կամ բանավոր շրջանագծի մեթոդը,
11. Վեննի դիագրամի մեթոդը,
12. Երկու աստղի կամ մեկ ցանկության մեթոդը,
13. Երեք բանալու կամ մեկ կողպեքի մեթոդը,
14. Ակրոստիքոսի մեթոդը,
15. Հեղինակի աթոռի մեթոդը,
16. 10-րոպեանոց շարադրության մեթոդը:

Այժմ կմանրամասնենք այս մեթոդներից յուրաքանչյուրի էությունն ու բովանդակությունը:

**Մտավոր գրոհի մեթոդ:** Մինչ ուսումնական նյութը ներկայացնելը աշակերտներին առաջարկվում է կողքին նստողի հետ քննարկել, թե ի՞նչ գիտեն տվյալ թեմայի մասին, ապա նրանք պետք է կազմեն ցուցակ գրի առնելով այն ամենը, ինչ գիտեն կամ կարծում են, թե գիտեն թեմայի մասին: Այս փուլում կարևորը տրված թեմայի շուրջ

---

<sup>4</sup> <<Գործիմաց մոտեցումը կրթական գործընթացում>> էջ 87-99

նրանց գիտելիքները համակողմանի ներկայացնելն է, անկախ այն բանից՝ սխալ են դրանք, թե՞ ճիշտ:

Այդպիսով իրականացվում է ուսուցման խթանման փուլը:

**Բանալի եզրույթների մեթոդ:** Ուսուցիչը կարող է տեքստից ընտրել 4-5 բանալի բառեր և դրանք գրել գրատախտակին: Ջուլգերին տրվում է 5 րոպե, որպեսզի ուղեղային գրոհի միջոցով տան այդ բառ-եզրույթների ընդհանուր մեկնաբանությունը և ենթադրեն, թե դրանք ինչպես կկիրառվեն պատմաժամանակագրական կամ բնագիտական տեքստում: Երբ սովորողները գալիս են մեկ ընդհանուր եզրակացության և գտնում իրենց <<բանալի >> բառերը, ուսուցիչը խնդրում է այդ բառերին ուշադրություն դարձնել նոր նյութի ուսուցման ժամանակ, որպեսզի ստուգեն՝ ճիշտ իմաստո՞վ են կիրառել, թե՞ ոչ:

Այս մեթոդը կիրառվում է ուսուցման խթանման փուլում:

**Տեքստի նշագրման համակարգի մեթոդ:** Տեքստն ընթերցելու ժամանակ աշակերտներին առաջարկել տեքստի նշագրման համակարգ, որով ստորաբաժանվում է զետեղված տեղեկատվությունը: Մասնավորապես օգտագործվում են հետևյալ նշանները.

(v)՝ ինչը նրանց արդեն հայտնի է,

(-) ինչը հակասում է նրանց պատկերացումներին,

(+) ինչը նրանց համար հետաքրքիր է ու ընդունելի,

(?)՝ նրանց մեջ ցանկություն է առաջացել ինչ-որ բանի մասին մանրամասն իմանալ:

Սովորողները տեքստը կարդալով՝ համապատասխանաբար լրացնում են հետևյալ աղյուսակը՝

v	-	+	?

Տարրական դասարաններում կարելի է հանձնարարել ուղղակի կարգալ՝ այդ ընթացքում առաջարկելով կատարել նշումներ՝ հաշվի առնելով այդ տարիքի երեխաների առանձնահատկությունները:

**Ձույգերով ընթերցման/ամփոփման դասի վերլուծության մեթոդ:** Ուսուցման գործընթացում կիրառման տեսակետից այս մեթոդն ունի մի շարք առավելություններ: Դրանք են՝

- Աշակերտները միասին ավելի արդյունավետ են աշխատում: Աշխատանքի ընթացքում ակներև է դերերի բաշխման արդյունավետությունը: Մի կողմից այն աշակերտի ուշադրությունը կենտրոնացնում է ընթերցվող բարդ տեքստի բովանդակության վրա, մյուս կողմից՝ քննության և կշռադատման անմիջական հնարավորություն է ստեղծում:
- Աշակերտներից պահանջվում է ուշադրություն, որպեսզի լսեն միմյանց և կիսեն դասարանում սովորելու և սովորեցնելու իրենց պատասխանատվությունը:
- Նույն հատվածի համար մի քանի պատասխանատու զույգ ունենալով՝ հատվածն ամբողջ խմբին ներկայացվում է տարբեր ձևերով, ինչն ընկալման ու կրկնության բազմաթիվ հնարավորություններ է ընձեռում:

**Խմբավորման մեթոդ:** Այս մեթոդը խրախուսում է երեխաներին ազատ ու անկաշկանդ մտածել որևէ թեմայի շուրջ: Մի դեպքում այն կարող է օգտագործվել մինչ թեմայի ավելի խոր ուսումնասիրությունը (խթանման փուլ), մյուս դեպքում՝ սովորածն ի մի բերելու համար (կշռադատման փուլ):

Ներկայացվող վարժության շնորհիվ հնարավոր է դառնում հստակեցնել պատկերացումները թեմայի մասին:

Մեթոդի կիրառման ժամանակ հանձնարարվում է՝

- Գրել առանցքային բառը թղթի կամ գրատախտակի կենտրոնում,
- Սկսել ընտրած թեմային առնչվող բառերն ու արտահայտությունները՝ առանց անհանգստանալու ուղղագրության կանոնների պահպանման համար,

- Գրի առնել միտքը եկած բոլոր գաղափարները առանց մտածելու դրանց ճշտության մասին,
- Մտքերը գրանցելուց հետո գծիկներով միացնել այն բառերը, որոնք կապ ունեն իրար հետ:

Այս մեթոդը կիրառելիս թեման պետք է ծանոթ լինի, որպեսզի խումբը բավարար տեղեկություն ունենա՝ խմբավորումն ամբողջական ներկայացնելու համար:

**Հնգյակների մեթոդ:** Այս մեթոդի կիրառման շնորհիվ հնարավոր է առկա գիտելիքները հանրագումարի բերել, ինչպես նաև մի քանի բառով ներկայացնել բարդ մտքերը, զգացմունքները և պատկերացումները:

Այս մեթոդով աշխատելիս անհրաժեշտ է դասարանը բաժանել զույգերի, ապա և առաջադրել նախատեսված թեման: Յուրաքանչյուր զույգ պետք է տրված թեմայով գրի իր հնգյակը: Հնգյակ գրելու քայլերն են.

1. Առաջին տողը մեկ բառ է, որը նկարագրում է հասկացությունը (գոյական),
2. Երկրորդ տողն ամբողջանում է հասկացությունը բնութագրող երկու բառով (ածականներ),
3. Երրորդ տողը բաղկացած է երեք բառից, որոնք արտահայտում են հասկացության հետ կապված գործողություններ (դերբայներ),
4. Չորրորդ տողում ներկայացնում է չորս բառանի մի արտահայտություն, որով հասկացության նկատմամբ դրսևորվում է զգացմունքը կամ վերաբեմունքը,
5. Վերջին տողը մեկ հոմանիշ բառ է, որն այլ կերպ է արտահայտում նույն հասկացությունը:

Հնգյակն ուսուցման արդյունավետ մեթոդ է, որն օգնում է համադրել բարդ տեղեկատվությունը, ստուգել աշակերտի կողմից տվյալ գաղափարի ընկալումը և ստեղծագործաբար արտահայտել սեփական տեսակետը:

**Խորանարդման մեթոդ:** Այս մեթոդն օգնում է՝ առաջադրված հարցը դիտել տարբեր տեսանկյուններից: Սրա կիրառման համար պետք է սովորաթղթից պատրաստել խորանարդ: Խորանարդի նիստերից յուրաքանչյուրի վրա գրեք հետևյալ

առաջադրանքներից որևէ մեկը. << Ինչպիսի՞ տեսք ունի այն>>, <<Այն ինչի՞ է նման և ինչից է տարբեր>>,<<Ինչի՞ մասին է այն ստիպում քեզ մտածել>>, <<Ինչից է այն կազմված/ բաղկացած>>, <<Ինչպե՞ս կարող ես օգտագործել այն>>, <<Այն լա՞վն է, թե վատը>>: Ըստ ուսուցանվող թեմայի կարող են օգտագործվել ոչ բոլոր նիստերը: Ուսումնասիրվող թեման պետք է ծանոթ լինի սովորողներին:

Մեթոդը պետք է սկսել՝ ներկայացնելով ուսումնասիրվող առարկան կամ հասկացությունը: Ապա սովորողներին հարկավոր է առաջարկել մտածել այդ առարկայի կամ հասկացության մասին և նկարագրել, համեմատել, զուգորդել այն՝ ըստ խորանարդի նիստերին գրված առաջադրանքների: Դրա համար անհրաժեշտ է ժամանակ տրամադրել: Այս գործընթացը կրկնվում է խորանարդի բոլոր վեց նիստերին նշված հրահանգներով: Այնուհետև առաջարկեք սովորողներին՝ միմյանց ներկայացնել իրենց գրածները: Խորանարդումը կիրառելի է և՛ խթանման, և՛ կշռադատման փուլերում:

**Խառնված հերթականությունների մեթոդ:** Այս մեթոդով սովորողներին ներկայացվում են առանձին թղթերի վրա գրառված, հաջորդաբար տեղի ունեցած և պատճառահետևանքային կապի մեջ գտնվող իրադարձությունները: Թղթերը խառնվում են և դրվում գրատախտակի ներքևում: Սովորողներին առաջարկվում է որոշել տեքստի ճիշտ հերթականությունը և մեկ-մեկ մոտենալով՝ թղթերը դնել իրենց համապատասխան տեղերը: Համաձայնության գալով իրադարձությունների հերթականության շուրջ՝ հանձնարարվում է ընթերցելիս ուշադիր զգնել տեքստն ու տեսնել, թե արդյո՞ք իրենց կատարած դասավորությունը համապատասխանում է տեքստի տարրերի դասավորությանը:

**Հինգրոպեանոց շարադրանքի մեթոդ:** Այս մեթոդն օգտագործվում է դասի վերջում: Դա աշակերտներին օգնում է ամփոփել ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ իրենց մտքերը և ուսուցիչներին առավել հստակ պատկերացում տալ դասի մտավոր ներգործության ուղղությամբ:

Սա աշակերտներից պահանջում է երկու գործողություն նախ՝ գրել այն մասին, թե ինչ սովորեցին թեման ուսումնասիրելիս, ապա և առաջադրել թեմայից ածանցվող մի հարց, որի պատասխանը դեռ չգիտեն:

**Գրավոր կամ բանավոր շրջանագծի մեթոդ:** Սա համագործակցային վարժություն է, որի ընթացքում օգտագործվում են մեկ թուղթ և մեկ մատիտ: Դրանք որոշակի պարբերականությամբ փոխանցվում են փոքր խմբի անդամներին: Խմբի մի անդամը գրում է մի միտք, ապա թուղթն ու մատիտը փոխանցում ձախ կողմում նստած հարևանին: Վերջինս իրենն է ավելացնում գրվածին և փոխանցում մյուսին:

Վարժության մեկ այլ տարբերակով յուրաքանչյուր անդամ գրում է տարբեր գույնի մատիտով: Սա տեսողական առումով ցույց է տալիս յուրաքանչյուրի մասնակցությունը ընդհանուր վարժությանը և խթանում մասնակիցների հավասար ներդրումը:

Նույն վարժության բանավոր տարբերակով խմբի յուրաքանչյուր անդամ բանավոր իր միտքն է հայտնում խմբին: Սա արվում է որոշակի պարբերականությամբ և հերթականությամբ:

**Վեննի դիագրամի մեթոդ:** Սա կառուցվում է երկու կամ ավելի շրջանագծերով, որոնք հատման որոշակի մակերես ունեն կենտրոնում: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները կամ կերպարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունը ցույց տալու նպատակով: Այդ պատճառով գրատախտակին գծվում են 2 կամ ավելի շրջանագծերը՝ որոնք հատվում են, և համեմատել կերպարներին:

**Երկու աստղի և մեկ ցանկության մեթոդ:** Տեքստն ընթերցելուց հետո կշռադաստման փուլում կարելի է իրականացնել այս մեթոդը, որի շնորհիվ ստեղծագործությունը դառնում է պարզ, ուսանելի և տպավորիչ:

Սովորողները նախ պետք է գրի առնեն տվյալ ստեղծագործության ամենահետաքրքիր և գլխավոր միտքն արտահայտող երկու նախադասություններ, որոնք էլ հենց դառնալու են <<2 աստղերը>>: Այնուհետև նրանք պետք է շարադրեն,

թե ինչպես կուզենաին, որ ավարտվեր տվյալ ստեղծագործությունը: Սա էլ կլինի իրենց ցանկությունը:

**Երեք բանալու և մեկ կողպեքի մեթոդ:** Սա ևս կիրառելի է կշռադատման փուլի ժամանակ: Այն բաղկացած է 2 կետից.

- Տեքստից ընտրել 3 պարբերություն, որոնք ներկայացնում են ստեղծագործության բովանդակությունը: Սրանք կլինեն երեք բանալիները:
- Կազմել մեկ նախադասություն (սեփական բառերով), որն արտահայտի տվյալ տեքստի կամ ստեղծագործության բովանդակությունը: Սա էլ կհամարվի կողպեքը:

**Ակրոստիքոսի մեթոդ:** Սա ակտիվացնում է սովորողներին: Այն հնարավորություն է ընձեռում՝ դրսևորելու անկաշկանդվածություն, բացահայտել ունակությունները: Առաջացնում է հավատ սեփական ուժերի նկատմամբ, զարգացնում է ստեղծագործական միտքը:

Այս մեթոդի էությունն հետևյալն է. գրել ցանկացած բառ, բառակապակցություն և հորինել բանաստեղծություն՝ յուրաքանչյուր տող սկսելով այդ բառի հերթական տառերով:

**Հեղինակի աթոռի մեթոդ:** Հնարավորություն է տալիս սեփական անձի նկատմամբ ուշադրություն գրավել: Այս մեթոդի շնորհիվ աշակերտների մեջ բացահայտվում է պատասխանատվության զգացումը:

Աշակերտներն իրենց գրած շարադրությունները, հորինվածքները և բանաստեղծությունները ներկայացնում կամ պատմում են առանձին աթոռի նստած՝ բոլորի աչքի առջև: Նրանք նստում են <<հեղինակի աթոռին>> և պաշտոնական հնչեղություն տալիս խոսքին: Կենտրոնում՝ ամբիոնից խոսելիս նրանց մեջ ձևավորվում է սեփական խոսքին հետևելու կարողություն, ինչպես նաև բարձրանում է սեփական ինքնարժեքը:

**10-րոպեանոց շարադրության մեթոդ:** Տեքստի ընթերցումից կամ ընդհանուր քննարկումից հետո կարելի է սովորողներին առաջարկել՝ կազմակերպեն իրենց

մտքերը 10-րոպեանոց խոհագրության տեսքով: Ուսուցիչը խնդրում է 10 րոպե գրել առանց դադարի կոնկրետ թեմայի վերաբերյալ: Գրավոր աշխատանքներ կազմակերպողները հաստատում են, որ ազատ գրավորի գործընթաց որպես այդպիսին, կարող է բացել ստեղծագործական խորքեր, որոնք նախապես պլանավորված ու մտածված գրավորի դեպքում մնում են փակ: Այսպիսով՝ սովորողները գրում են ազատ խոհագրություն՝ առանց կտրվելու, առանց կանգառի: Եթե նրանք այլևս չգիտեն, թե ինչ կարելի է գրել, ապա թող թղթին հանձնեն այս արտահայտությունը. «Ես չգիտեմ, ինչ գրեմ այլևս»: Գլխավորն այն է, որ գրեն առանց կանգառի, վերընթերցելու և ուղղումների: Ազատ շարադրությունից հետո շատ ուսուցիչներ սովորողներին առաջարկում են նայել գրածը, ընդգծել հիմնական մտքերը և գրել նորը՝ օգտացործելով այդ մտքերը որպես առանցք և մաքրելով մնացած ամեն ինչը:



### 1.3. Ուսուցման մեթոդների ընտրությունը

Դիտարկելու ենք առանձին գործոններ, որոնք անմիջականորեն պետք է հաշվի առնել ուսուցման մեթոդների ընտրության ժամանակ:

#### Ուսուցման նպատակներ

Ուսուցման մեթոդների և ուսուցման նպատակների միջև գոյություն ունի սերտ կապ:

Ցանկացած կրթության նպատակը ուսումնառողների մոտ անձնային որակների և ուղղվածության համար անհրաժեշտ գիտելիքների ուսուցումն է, կարողությունների, հմտությունների, կոմպետենցիայերի ձևավորում: Բայց, քանի որ ուսումնական գործունեության ժամանակ իրականացվում են նպատակի այս բոլոր բաղադրիչները, ապա անհրաժեշտ է օգտագործել տարբեր մեթոդներ՝ դրանց ամբողջականության մեջ: Այդ կապակցությամբ մեթոդների ընտրության կարևոր գործոն է հանդիսանում կոնկրետ ուսումնական պարապմունքի դիդակտիկ խնդիրը:

Ուսուցման մեթոդների թվարկման ժամանակ արդեն քննարկել ենք, թե դրանցից որոնք են ավելի համապատասխանում ուսուցման այս կամ այն նպատակի իրականացման համար: Վերոհիշյալի վերլուծությունը առավել տեսանելի է դառնում աղյուսակ 1-ի միջոցով:

N	Մեթոդը	Գիտելիքներ	Կարողություններ, ր, հմտություններ,	Նպատակային ուղղվածություն
1	Մտավոր գրոհի մեթոդ	+		+
2	Բանալի եզրույթների մեթոդ	+		+
3	Տեքստի նշագրման համակարգի մեթոդ	+	+	+
4	Զույգերով ընթերցման/ամփոփման վերլուծություն	+		+

5	Խմբավորման մեթոդ	+		+
6	Հնգյակների մեթոդ	+		+
7	Խորանարդման մեթոդ	+		+
8	Խառնված հերթականությունների մեթոդ	+	+	+
9	Հինգրուպեանոց շարադրանքի մեթոդ	+	++	+
10	Գրավոր կամ բանավոր շրջանագծի մեթոդ	+	++	+
11	Վեննի դիագրամի մեթոդ	++	+	+
12	2 աստղի կամ 1 ցանկության մեթոդ	+		+
13	Յբանալու կամ 1 կողպեքի մեթոդ	+		+
14	Ակրոստիքոսի մեթոդ	+	+	+
15	Հեղինակի աթոռի մեթոդ	+		+
16	Տասրուպեանոց շարադրության մեթոդ	+		+

Աղյուսակում + նշանը ցույց է տալիս, որ տվյալ մեթոդն արդյունավետ է այն դեպքում, երբ այն ուղղված է տվյալ նպատակի իրականացմանը, կամ խնդրի լուծմանը: Մնացած դեպքերում + նշանների քանակը ցույց է տալիս մեթոդի արդյունավետության աստիճանը:


Մեթոդի ընտրությունը կախված է ոչ միայն նպատակից, այլև ուսումնական առարկայի բարդությունից և ուսումնական նյութի բովանդակությունից:

Հոգեբանների կողմից ապացուցվել է, որ ուսուցման խոսքային մեթոդների կիրառության ժամանակ ուսումնառողների հիշողության մեջ պահպանվում է տեղեկատվության միայն 5%-ը: Գրքի ընթերցումը հնարավորություն է ընձեռում հիշողության մեջ պահպանել տեղեկատվության 10%-ը, նկարների, դիտողական պարագաների դեպքում՝ տեսողականացված տեղեկատվության 20%-ը: Արդյունավետ

մեթոդներ են հանդիսանում գործնական և դերային խաղերը, որի արդյունքում աշակերտների մոտ պահպանվում է տեղեկատվության 75%-ը: Բայց առավել մեծ արգասաբերություն է ապահովում ուսումնագործնական պարապմունքների անցկացումը հենց աշակերտների կողմից, յուրացվում է տեղեկատվության 90%-ը<sup>5</sup>:

Ուսուցման աստիճանացույցում ցույց է տրված, բարձր հիմքով, ուսուցման արդյունքներին հասնելու յուրաքանչյուր մեթոդի բաժնեմասը:

Գիտելիքների յուրացման նպատակով ինչքան շատ են օգտագործվում զգայական ուղիներն, այնքան բարձր է հիշողության մեջ պահվող գիտելիքների որակն ու քանակը: Ավելի մանրամասն տրված է նկար 2-ում<sup>6</sup>:



Եթե գիտելիքները փոխանցվել է միայն պասիվ ունկնդրման միջոցով, ապա երեք օրից հետո հիշողության մեջ մնում է միայն 25%-ը: Եթե գիտելիքը, այնուամենայնիվ, փոխանցվում է լսողության, տեսողության, շոշափելիքի միջոցով, ապա երեք օրից հետո հիշողության մեջ մնում է 75%-ը: Այս երևույթը հիմնավորվում է տեղեկատվության փոխանցման գործընթացի ընկալման մի քանի զգայական ուղիների մասնակցության շնորհիվ: Այս ուսումնական իրավիճակներում ուժեղացվում է նաև ուսումնառողների ակտիվությունը:

<sup>5</sup> Հայկ Պետրոսյան «Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ» Երևան 2012թ. Էջ 188

<sup>6</sup> Հայկ Պետրոսյան «Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ» Երևան 2012թ. Էջ 190

## Ուսումնառողների թիվը

Քննարկվող հարցերի շրջանակներում ոչ պակաս նշանակություն ունի ուսումնառողների թիվն ուսումնական խմբում: Եթե խմբում ընդգրկված ուսումնառողների թիվը մեծ չէ, ապա օգտագործելով ակտիվություն ապահովող մեթոդներ՝ ուսուցումը կարելի է առավել ինտենսիվ դարձնել: Իսկ եթե խմբում ընդգրկված ուսումնառողների թիվը մեծ է, ապա ակտիվություն ապահովող մեթոդների կիրառության ժամանակ դժվար թե յուրաքանչյուր աշակերտին պատշաճ ուշադրություն դարձնելու համար ժամանակը բավարարի: Մեծ խմբերի համար առավել արգասաբեր է համարվում ուսումնական նյութի ներկայացման խոսքային մեթոդները:

### Աշակերտների ուսումնական հնարավորությունները

Մինչև ուսուցման մեթոդի ընտրությունն անհրաժեշտ է գնահատել ուսումնառողի ինքնիրացման մակարդակը: Դա կարելի է իրականացնել, օրինակ, հնգբայան համակարգով. Առաջին մակարդակը՝ 5 միավոր, հաջորդները՝ մեկական միավոր ցածր: Հետո միայն կարելի է կատարել մեթոդի ընտրություն, դրանք զուգակցելով այնպես, որ ապահովվի յուրաքանչյուր աշակերտի ուսումնառությունը:

Աշակերտների աշխատունակության դինամիկան շաբաթվա ընթացքում կարելի է ներկայացնել աղյուսակ 2-ով<sup>7</sup>:


Շաբաթվա օրերը	1	2	3	4	5	6
Երկուշաբթի	Մ	Մ	Մ	Մ	Մ	Ց
Երեքշաբթի	Բ	Բ	Ց	Մ	Մ	Ց
Չորեքշաբթի	Բ	Բ	Ց	Մ	Մ	Ց
Հինգշաբթի	Մ	Բ	Ց	Մ	Մ	Ց
Ուրբաթ	Մ	Մ	Մ	Ց	Ց	Ց
Շաբաթ	Ց	Մ	Ց	Ց	Ց	Ց

<sup>7</sup> Զայկ Պետրոսյան «Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ» Երևան 2012թ. Էջ 191

Աղյուսակում Բ տառով նշված է աշակերտի առավել բարձր (ուսումնառության համար բարենպաստ ժամանակահատվածը), Մ-ով՝ միջին և Ց-ով՝ առավել ցածր աշխատունակությունը: Բայց աշակերտին գործունեության մեկ ոլորտից մեկ այլ ոլորտ տեղափոխությունը խելացի կազմակերպելու դեպքում հնարավոր է դառնում խուսափել աշխատունակության անկումից:

### Ուշադրությունը

Ուսումնառությունը ծանր և հոգնեցուցիչ աշխատանք է: Աշակերտի ուշադրության առավելագույն ժամանակահատվածը որոշակի ուսումնական առարկայի համար կազմում է շուրջ 20 րոպե և նոր գիտելիքների ներմուծումը պետք է իրականացվի հենց այդ ժամանակահատվածի ընթացքում: Մոտավորապես 60 րոպե հետո ուշադրությունը հասնում է նվազագույնի: Այդ պատճառով արդյունավետ է 45 րոպե տևողությամբ դասերը: Ավելի մանրամասն տրված է նկար 3-ում<sup>8</sup>:



Բացի այդ, հիշողության մեջ գիտելիքների մտապահման և վերարտադրելու որակի վրա ազդում է ըմբռնման ծավալը, ինչպես նաև ուսումնառության պրոֆեսիոնալիզմը՝ որոշակի ժամանակահատվածում գիտելիքների յուրացումը:

<sup>8</sup> Հայկ Պետրոսյան «Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ» Երևան 2012թ. Էջ 192

Ըստ մասնագիտական գրականության մեջ բերված տվյալների գիտափորձերը ցույց են տվել, որ մտապահվող գիտելիքների քանակը տոկոսներով արտահայտված ժամանակի ընթացքում նվազում է: Մանրամասն տրված է աղյուսակ 3-ում<sup>9</sup>:


Ժամանակահատված	Հիշողության մեջ պահպանված գիտելիքները տոկոսներով արտահայտված
20 րոպե	58
1 ժամ	44
1 օր	34
2օր	28
6օր	25
30 օր	21

Այդ իսկ պատճառով գիտելիքները որոշակի ժամանակահատվածից հետո պետք է կրկնվեն տարբեր ուսուցման մեթոդների կամ տնային աշխատանքների հանձնարարությունների միջոցով:

Միաժամանակ, մարդկային օրգանների ֆունկցիաները օրվա 24 ժամերի ընթացքում ենթակա են բնորոշ տատանումների, որի պատճառով մարդը որոշակի ժամերի տրամադրված է աշխուժության և աշխատանքի, իսկ որոշ ժամերի՝ քնելու և հանգստի: Մանրամասն տրված է նկար 4-ում<sup>10</sup>:

<sup>9</sup> Հայկ Պետրոսյան «Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ» Երևան 2012թ. Էջ 192

<sup>10</sup> Հայկ Պետրոսյան «Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ» Երևան 2012թ. Էջ 193



### **Ուսումնառության տևողությունը**

Առարկայական ծրագրի կամ ուսումնական առարկային հատկացված ժամանակը անշուշտ ազդում է ուսուցման մեթոդի ընտրության վրա: Դրանցից որոշները պահանջում են շատ ժամանակ, ինչպես հենց աշակերտների նախապատրաստվելու, այնպես էլ այդ գործունեության իրականացման համար:

Ուսումնառության տևողությունը հանդիսանում է շատ կարևոր գործոն նաև դասավանդողի աշխատանքային բեռնվածության տեսանկյունից այս կամ այն մեթոդի կիրառության համար: Որոշ մեթոդներ դասավանդողից պահանջում են մանրակրկիտ նախապատրաստություն, քան մյուսները: Այդ պատճառով էլ պլանավորելով այդպիսի մեթոդների կիրառում, անհրաժեշտ է ճիշտ հաշվարկել գործունեության այդ տեսակի կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ ժամանակահատվածը:

## Գլուխ 2

### ՈՒՍՈՒՑՄԱՆ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐ, ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐ, ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

#### 2.1. Ուսուցման ինտերակտիվ մեթոդներ, դրանց կիրառումը

##### տարրական դայրոցում

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման տեմպը, ուսուցման ժամանակակից մեթոդները, սովորողների անընդհատ ինքնակրթության և զարգացման անհրաժեշտությունը պարտադրում են ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք բարձրացնում են կրթության արդյունավետությունը և որակը, ապահովում են ինքնուրույն ճանաչողական գործունեության շարժառիթներ, նպաստում են միջառարկայական կապերի ամրապնդմանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և առարկայական ծրագրերի ինտեգրման եղանակով: Այս պահանջներին բավարարում է ինտերակտիվ մեթոդների կիրառումը:

«Ինտերակտիվ» նշանակում է փոխազդող, փոխներգործող («Inter»՝ փոխադարձ, «act»՝ գործողություն): Ինտերակտիվ դասը փոխգործակցություն է ոչ միայն դասավանդողի և սովորողի, այլև հենց իրենց՝ սովորողների միջև, ուսումնական նյութի և սովորողների միջև: Ավանդականների հետ համեմատած, ուսուցման ինտերակտիվ մոդելներում փոխվում է նաև փոխգործակցությունն ուսուցչի հետ. նրա ակտիվությունն իր տեղն է զիջում սովորողների ակտիվությանը, ուսուցչի խնդիրն է ստեղծել պայմաններ նրանց նախաձեռնության համար: Ինտերակտիվ տեխնոլոգիաներում սովորողները հանդես են գալիս որպես լիիրավ մասնակիցներ, նրանց փորձը պակաս կարևոր չէ ուսուցչի փորձից: Վերջինս ոչ այնքան տալիս է պատրաստի գիտելիքներ, որքան խթանում է սովորողների ինքնուրույն որոնումը: Ինտերակտիվ տեխնոլոգիաներում ուսուցիչը հանդես է գալիս մի քանի հիմնական դերերով: Նրանցից յուրաքանչյուրում նա կազմակերպում է մասնակիցների փոխգործողությունը տեղեկատվական միջավայրի այս կամ այն հատվածի հետ: Իրազեկիչ-փորձագետի դերում ուսուցիչը շարադրում է տեքստային նյութը,



ցուցադրում տեսաշարքը, պատասխանում մասնակիցների հարցերին, հետևում է գործընթացի արդյունքներին և այլն: Կազմակերպչի դերում նա կազմակերպում է սովորողների փոխգործակցությունը սոցիալական և ֆիզիկական շրջապատի հետ (բաժանում է խմբերի, խթանում է նրանց ինքնուրույն տվյալներ հավաքելը, համաձայնեցնում է առաջադրանքների կատարումը, մինի շնորհանդեսների նախապատրաստումը և այլն): Խորհրդատուի դերում ուսուցիչը դիմում է աշակերտների փորձին, օգնում է գտնել արդեն ձևակերպված խնդիրների լուծումը, ինքնուրույն ձևակերպել նորերը և այլն:

Վերջին տարիներին տարրական դասարանների ուսուցիչների առջև բացվում է գործունեության լայն դաշտ՝ ստեղծագործել, և որոնել ուսուցման իդեալական տարբերակ: Այսօր տարրական կրթությունը ձևավորում է երեխաների կրթական գործունեությունը, պահպանում է կրթական համակարգը և ճանաչողական դրդապատճառները, իրականացնում է կրթական նպատակները, վերահսկում և գնահատում է ուսումնական նպատակներն ու նրանց արդյունքները:

Կրտսեր դպրոցականն ունի տարիքային առանձնահատկություններ. անկայուն ուշադրություն, տեսողական-պատկերավոր մտածողության գերակշռում, բարձր շարժողական ակտիվություն, ձգտում խաղային գործունեության, ճանաչողական հետաքրքրությունների բազմազանություն:

Դասի ընթացքում երեխաների ուշադրությունը պահելու համար անհրաժեշտ է ակտիվ և հետաքրքիր դասաժամի կազմակերպում: Մեր դիտարկումների ընթացքում մենք հանգել ենք այն եզրակացության, որ առանց շարժառիթի կամ թույլ շարժառիթով գործունեությունը ցանկացած ձևերի և մեթոդների կիրառման դեպքում կա՛մ ընդհանրապես չի իրականացվում, կա՛մ ծայրաստիճան անկայուն է լինում: Թե աշակերտն իրեն ինչպես է զգում որոշակի իրավիճակում, կախված է այն ջանքերի ծավալից, որոնք նա գործադրում է իր ուսման ժամանակ: Այդ պատճառով կարևոր է, որ ուսուցման ամբողջ գործընթացը երեխայի մոտ առաջացնի ինտենսիվ և ներքին դրդում՝ լարված մտավոր աշխատանքի համար: Մեր հետազոտության ընթացքում մենք պարզեցինք, որ դպրոցականի զարգացումն ավելի ինտենսիվ և արդյունավետ է տեղի ունենում, եթե նա ներառված է գործունեության մեջ, որը համապատասխանում

է նրա տարիքային առանձնահատկություններին: Եթե դրական հույզեր է առաջացնում ուսուցումը, իսկ կրթական գործընթացի մասնակիցների մանկավարժական ներգործությունը հիմնված է վստահության վրա, ապա ուժեղացնում է հույզերի և ըմբռնման դերը:

Կայուն ուսումնական շարժառիթի (մոտիվացիայի) և ճանաչողական ակտիվության զարգացման նպատակով կիրառվում են աշակերտների գործունեության բազմազան մեթոդներ՝ խրախուսում, հաջողության իրավիճակների ստեղծում, պրոբլեմային իրավիճակների ստեղծում, ստեղծագործական առաջադրանքների կատարում, պատասխանատվության ձևավորում, օգտակար լինելու ցանկության ձևավորում, փոխօգնության իրավիճակների ստեղծում, կոլեկտիվ աշխատանքի արդյունքների նկատմամբ հետաքրքրություն, ինքնաստուգման և փոխստուգման կազմակերպում, դրդում այլընտրանքային լուծումների որոնման:

Հետևաբար, կրտսեր դպրոցականների ուսուցման հաջողության գրավականը կայուն ուսումնական շարժառիթի առկայությունն է:

Մեր հետազոտությունների ընթացքում կիրառում էինք նաև նախագծերի մեթոդը, որը ուղղված է երեխաների հետազոտական, ստեղծագործական ակտիվությանը, ունիվերսալ ուսումնական գործողությունների ձևավորումանը, տրամաբանական-ճանաչողական մտածողության զարգացմանը:

Ի՞նչ է նախագիծը (հետազոտությունները) փոքր երեխայի համար: Դա, նախ և առաջ, կյանքի դիտարկումն է, շատ երևույթների բացահայտումը: Նախագծերի մեթոդի կիրառումը ավելի արդյունավետ է լինում, երբ ուսուցիչը հարցում է անցկացնում աշակերտների միջև, թե ինչ թեմայի շուրջ կցանկանային աշխատել:

Տնային կենդանիների կյանքին, բույսերին, մարդու գործերին հետևելը. այս ամենը ներառվում է նախագծերի մեջ: Դիտարկումների օրագիրը նախագծի հիմքն է: Այդպիսի դիտարկումների արդյունք է դառնում բանավոր պատմությունը կամ նկարը: Տնային կենդանիների վերաբերյալ նախագծերը գրեթե միշտ շատ հաջող են ստացվում՝ հազեցած հետաքրքիր պատմություններով, դիտարկումներով և հիանալի

լուսանկարներով: Նախագծերի տվյալ տեսակը կիրառում է ես և շրջակա աշխարհը առարկայի դասերին:

Կառուցողական նախագծերը կիրառվում են աշխատանքի ուսուցման դասերի ժամանակ: Դրանց թվին է դասվում շնորհավորական բացիկների, գրքերի էջանիշների, խաղալիքների, հուշանվերների պատրաստումը: Այսպիսի նախագծման հիմնական գաղափարը ինքնասպասարկման գաղափարն է: Այսպիսի նախագծի խնդիրը կայանում է նրանում, որ ավանդական առաջադրանքներին տրվի նախագծային ձև՝ պատրաստման հնարավոր տարբերակների մշակում, մեկ տարբերակի ընտրությունը և ռեֆլեքսիան աշխատանքի վերջում: Նախագծերի բարդ չլինելն ապահովում է նրանց կատարման հաջողությունը և հանդիսանում է խթան, որն աշակերտին ոգեշնչում է կատարելու ուրիշ, ավելի բարդ և ինքնուրույն նախագծեր:

Նախագծերի մեթոդի կիրառումը նպաստում է ներդաշնակ անձի զարգացմանը և համապատասխանում է արդի հասարակության պահանջներին.

- ընդունելու ինքնուրույն որոշումներ,
- խնդիրներ առաջադրելու և հարցեր տալու ունակություն,
- ոչ ստանդարտ, յուրօրինակ լուծումների որոնում,
- շրջապատողներին ընտրված թեմայով գրավելու, հետաքրքրելու ունակություն,
- անհատական ներուժի բացահայտում:

Շփման պահանջմունքի իրականացման համար կիրառվում է բանավեճի կամ կառուցվածքային երկխոսության մեթոդը, ինչը ենթադրում է մասնակցողների իրավահավասարություն: Աստիճանաբար երկխոսությունը ձեռք է բերում սուբյեկտների միջև կոլեկտիվ ուսումնական գործունեության լայն շփման ձև:

Միմյանց հետ շփվելու, բանավեճ վարելու ունակությունը յուրաքանչյուր երեխայի հնարավորություն է տալիս ապրել ճշմարտության համատեղ որոնման զգացումը: Դպրոցականներին պետք է սովորեցնել երկխոսության մեջ աշխատանքի հետևյալ կանոնները.

- պատասխանել տրված հարցին,
- յուրաքանչյուրն ունի իր տեսակետի իրավունք,
- յուրաքանչյուրն իրավունք ունի պաշտպանել ուրիշի տեսակետը,
- յուրաքանչյուրն իրավունք ունի քննադատել ուրիշի տեսակետը:

Այս մեթոդի կիրառման մեջ առավել արժեքավորն այն է, որ ուսմունքը գալիս է սովորողներից, իսկ ուսուցիչը ուղղորդում էինք կոլեկտիվ որոնումը, որոշում անհրաժեշտ միտքը և նրանց տանում եզրակացությունների: Պատասխանում են և՛ ուժեղները, և՛ թույլերը: Սովորողները չեն վախենում պատասխանի մեջ սխալ անելուց, քանի որ գիտեն, որ իրենց դասարանցիները միշտ օգնության կհասնեն, և իրենք բոլորը միասին ճիշտ որոշում կընդունեն: Աշխատանքում կարևորը շփվելու, բանավեճ վարելու ունակությունն է, լսելով յուրաքանչյուրին՝ պատասխանները հմտորեն և աննկատ դեպի անհրաժեշտ կողմ տանելը: Որպես օրինակ կարող է ծառայել երկրաչափական նյութի հետ աշխատանքը մաթեմատիկայի դասին 2-րդ դասարանում:

Նշենք բանավեճի դրական կողմերը.

- աշակերտը ներգրավվում է ակտիվ ճանաչողական գործունեության մեջ, սովորում է մասնակցել բանավեճերին, հստակ ձևակերպել հարցը, պարզ արտահայտել մտքերը, պաշտպանել իր կարծիքը, լսել ուրիշ տեսակետներ,
- փոխազդեցության ընթացքում տեղի է ունենում դպրոցականների փոխադարձ հարստացում, քանի որ յուրաքանչյուրը հնարավորություն է ստանում դիմել պարզաբանում ստանալու համար և ստանալու ավելի ամբողջական ինֆորմացիա,
- միասին մտածելով, սովորողները հասնում են քննարկվող հարցերի իրական բովանդակությանը:

Տարրական դպրոցի կարևոր խնդիր է հանդիսանում երեխաներին հաղորդակցության տարբեր ձևեր սովորեցնելը: Խմբային ուսուցման մեթոդի կիրառումը շատ արդյունավետ է տվյալ խնդիրը իրականացնելիս: 1-ին և 2-րդ դասարաններում կիրառվում է գույգերով աշխատանքը: Զույգերով աշխատանքը

դիտվում է որպես առաջին դասարանցիների գործնական միջանձնային հարաբերությունների ձևավորման սկզբնական փուլ:

Զույգերով աշխատանքը ուսումնական գործընթացի կազմակերպման առավել հարմարավետ ձևն է, որի նպատակն է գործնական միջանձնային հարաբերությունների ձևավորումը: Զույգերով աշխատանքը երեխաների մոտ ձևավորում է ընդհանուր նպատակն ընդունելու, պարտականությունները բաժանելու, առաջարկված նպատակին հասնելու եղանակները համաձայնեցնելու, իր գործողությունները համատեղ գործունեության մեջ գործընկերոջ գործողությունների հետ հարաբերակցելու, աշխատանքի նպատակի և արդյունքի համեմատության մեջ մասնակցություն ունենալու ունակությունները:

Այսպիսով, հիմք ընդունելով վերը նշված դիտարկումները, կազմակերպվում է ուսուցման գործընթացը՝ հաշվի առնելով գործնական միջանձնային հարաբերությունների զարգացման անհատական բնույթը: Հենց այդ դիրքորոշումից ելնելով երեխաներին սովորեցնում են պլանավորել համատեղ գործունեությունը, պայմանավորել առաջադրանքի կատարման եղանակների մասին, իրենց գործողությունները զուգընկերոջ գործողությունների հետ հարաբերակցել, մասնակցություն ունենալ գործունեության նպատակի և արդյունքի համեմատության մեջ: Դա համատեղ գործունեության նկատմամբ դրական վերաբերմունքի առաջացման պայմանն է:

Երրորդ դասարանից սկսած՝ պրակտիկա է ներմուծվում սովորողների խմբային փոխազդեցության մեթոդը: Խմբերում աշխատանքը կազմակերպելիս անհրաժեշտ է պահպանել մի քանի պայմաններ.

- Խումբը ստանում է հստակ և կոնկրետ ձևակերպված առաջադրանք՝ լրիվ կանխատեսելի արդյունքով,
- Խնդրի լուծման համար անհրաժեշտ իրերի ապահովում՝ դասագրքերի, լրացուցիչ տեղեկատու գրականության տեսքով,
- Նախապես տրվում է խմբի հաշվետվության ձևը. հարցերի գրավոր կամ բանավոր պատասխաններ, աղյուսակների լրացում և այլն:

Այստեղ յուրաքանչյուրն աշխատում է յուրաքանչյուրի համար: Քննարկման ընթացքում սովորողներն իրենց ուժերի ներածին չափով ինտելեկտուալ ներդրում են ունենում ընդհանուր գործի մեջ: Տեղի է ունենում գիտելիքների, գաղափարների փոխանակում: Փոխվում է հոգեբանական մթնոլորտը: Նույնիսկ խմբում ետ մնացող աշակերտները չեն բարդույթավորվում, նույնպես սկսում են ակտիվորեն մասնակցել քննարկմանը և առաջադրված խնդիրների լուծմանը: Կոլեկտիվ քննարկման ընթացքում երեխաները սովորում են բանավեճի, շփման և համագործակցության կուլտուրան, սովորում են լսել իրար: Յուրաքանչյուր նոր ուսումնական խնդրի հետ նրանք կատարելագործում են ճանաչողական որոնման իրենց մարտավարությունը: Նրանք իրենք են ստեղծում հաջողության իրենց բանաձևը:

Խմբերն աշխատում են: Աշակերտները հնարավորություն ունեն շփվելու ոչ թե ամբողջ դասարանի հետ, այլ 4-6 հոգանոց խմբի հետ, ինչը շատ ավելի արդյունավետ է: Երբեմն բավական է մի քանի բառ, որպեսզի աշակերտին օգնենք գտնել իր աշխատանքի ավելի հաջող շարունակությունը: Նկատեք, ոչ պատրաստի պատասխանը: Հնարավորություն կա, խմբից խումբ անցնելով, գովել նրանց յուրօրինակ լուծման համար, մյուսներին հանդիմանել միօրինակ մտածողության համար, առանձին աշակերտների նկատողություն անել իրենց պասիվության համար: Գլխավորն այն է, որ երեխաները հասկանան. ինքնուրույն գիտելիքներ հայթայթելը հետաքրքիր է և անհրաժեշտ:

Փոքր խմբերում երեխաները սովորում են արտահայտել իրենց տեսակետը, հարգալից վերաբերել ուրիշի կարծիքին, իրենց տեսակետը ենթարկել ընկերների կարծիքին, եթե նրանք ուսումնական իրավիճակի քննարկման ժամանակ ավելի մոտ են ճշմարտությանը:

Տարրական դպրոցում դասերի ժամանակ անհրաժեշտ է կիրառել ուսուցման ինտերակտիվ մեթոդներ, քանի որ դրանք թույլ են տալիս նյութը մատուցել մատչելի, հետաքրքիր, վառ և պատկերավոր ձևով, նպաստում են գիտելիքների ավելի խորը յուրացմանը, հետաքրքրություն են առաջացնում գիտելիքների ձեռքբերման հանդեպ, ձևավորում են հաղորդակցական, անձնական, սոցիալական, ինտելեկտուալ գրագիտություն:

## 2.2 Ուսուցման ակտիվ մեթոդներ, դրանց կիրառումը տարրական դպրոցում

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են նաև ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը:

Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերտի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում:

Ակտիվ ուսուցման մեթոդ նշանակում է ուսուցում գործունեության մեջ: <<Ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ>><sup>11</sup>: Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և ուսանողների միջև, այնպես էլ իրենց, աշակերտների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է աշակերտների խոսքը: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել

<sup>11</sup> Выготский Л.С. Педагогическая психология С 8

ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել աշակերտների կողմից ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն):

Մարդը շրջապատող միջավայրը ընկալում է իր 5 զգայարաններով: Սակայն տեղեկատվության ընկալման գլխավոր դերը կատարում են աչքերը: Մարդու կարողությունները չափազանց սահմանափակվում են այդ զգայարանի բացակայության դեպքում: Այդ պատճառով էլ ուսումնական գործընթացներում կարևոր տեղ է հատկացվում տեսողականացմանը: Տեղեկատվությունը և ուսումնական բովանդակությունը միշտ պետք է ներկայացվեն ընկալման տեսողական ծավալների հաշվառմամբ, աչքերին՝ թողնելով առավել էական առարկաներն ու երևույթները: Տեսողականացման տակ մենք հասկանում ենք տեղեկատվության կամ ուսումնական բովանդակության պատկերազարդումը ակներև պատկերների միջոցով: Հետևաբար տեսողականացումը պատկերազարդման մեթոդ է, ինչպես նաև միջոց: Պատկերազարդման այլ հնարավորություններ են մոդելների ներկայացումը, գործընթացի ցուցադրումը, առարկաների գործածումը:

Ցուցադրությունը (դեմոնստրացիա) ուսումնառողներին՝ երևույթներին, գործընթացներին, օբյեկտներին բնական վիճակում զննական-զգայական ձևով ծանոթացնելն է: Պատկերազարդումը (իլյուստրացիա) ենթադրում է առարկաների, երևույթների ցուցադրումն ու ընկալումը դրանց սիմվոլիկ պատկերներով: Այս մեթոդի անվանման հիմքը անգլ. action- փոխազդեցություն բառն է: Սկզբնական շրջանում այսպես էր անվանվում ուսումնական պարապմունքների մի որոշակի տարբերակ, որն աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավեճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և տվյալ հարցի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ հնարավորություններ էր տալիս: Հետագայում ավելի տարածվեց «ինտերակտիվ մեթոդներ» բառակապակցությունը, որը ներառում էր վերոհիշյալ



հնարավորություններով դրսևորվող ուսումնական պարապմունքների կազմակերպման մի շարք համանման տարբերակներ:

Ցանկացած սոցիալական գործընթաց մարդկանց փոխազդեցություն է: Մասնավորապես՝ ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է: Սակայն ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորվում է այդ փոխազդեցության կառուցվածքով, ձևերով ու բովանդակությամբ: Դաս-դասարանային համակարգի ուսուցման գործընթացի կառուցվածքային հիմքում դրված է փոխազդեցության ուսուցիչ-աշակերտական խումբ ձևը: Սա է պատճառը, որ աշխատանքի յուրաքանչյուր պահին բոլոր աշակերտները զբաղված են միևնույն խնդրով, աշխատում են միևնույն ձևով, տվյալ խնդրի կատարման համար բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը: Նման տեսակի ուսումնական պարապմունքները անվանվում է խմբային: Խմբային պարապմունքների բավական լուրջ պրոբլեմներից մեկ այն է, որ ուսումնական խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է հայտնվում: Սրա հաղթահարման ուղիներից մեկն աշակերտների միջև արդյունավետ փոխազդեցության կազմակերպումն է, ինչն էլ հենց հանդիսանում է ինտերակտիվ մեթոդի հիմնական գաղափարը: Սակայն խմբային ուսուցման պայմաններում աշակերտների միջև փոխազդեցություն կազմակերպելու հնարավորությունները սահմանափակ են:

Այստեղ հիմնականում օգտագործվում են ենթախմբային կամ համախմբային քննարկումների տարբեր հնարքներ ու մեթոդներ, որոնք բավական արդյունավետ են կարծիքների ձևավորման, փոխանակման, ընդհանուր մոտեցումների մշակման համար: Եթե երեխայի գործունեության առաջնային և ցանկալի ձևը համարվում է խաղը, ապա ուսուցման կազմակերպման համար պետք է օգտագործեն գործունեության այս ձևը՝ համատեղելով խաղը և ուսումնական գործընթացը, ավելի ճիշտ, օգտագործել խաղային գործունեությունը կրթական նպատակներին հասնելու համար: Այս դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական ծրագրի ավելի արդյունավետ իրագործմանը: Բարձր դրական մոտիվացիան կարող է լրացնող գործոն հանդիսանալ սովորողների ոչ բավարար բարձր ունակությունների ժամանակ, բայց հակառակ ուղղությամբ այդ սկզբունքը չի աշխատում՝ ոչ մի

կարողություն չի կարող փոխհատուցել մոտիվացիայի բացակայությունը, և ապահովել ուսուցման էական առաջընթաց: Բնական խաղային միջավայրում, որտեղ չկա պարտադրանք, և կա հնարավորություն յուրաքանչյուր երեխայի համար գտնել իր տեղը, ունենալ նախաձեռնություն և անկախություն, ազատ իրականացնելու իրենց կարողությունները և կրթական կարիքները, հանդիսանում է ուսումնական նպատակներին հասնելու օպտիմալ տարբերակ: Եվ կրթական գործընթացում ուսուցման ակտիվ մեթոդների ներառումը թույլ է տալիս ստեղծել այդպիսի միջավայր՝ ինչպես դասարանում, այնպես էլ արտադպրոցական միջոցառումների ժամանակ:

Կան ուսուցման ակտիվ մեթոդների տարբեր դասակարգումներ: Սա պայմանավորված է նրանով, որ դեռ չկա ակտիվ մեթոդների համընդհանուր ընդունված սահմանում: Այսպիսով, երբեմն ԱՌԻՄ հասկացությունը ընդարձակում են՝ դրանց թվին դասելով ուսուցման ժամանակակից այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ ինտերակտիվ սեմինարը, թրենինգները, պրոբլեմային ուսուցումը, ուսուցում համագործակցությամբ, ուսուցողական խաղեր և այլն: Կոնկրետացնելով, դրանք ամբողջական կրթական միջոցառման, կամ էլ առարկայական ցիկլի կազմակերպման ձևեր են, չնայած, իհարկե, այդ ուսուցման ձևերի սկզբունքները կարող են օգտագործվել դասի առանձին մասերը անցկացնելու համար:

Ակտիվ ուսուցման մեթոդները – մեթոդներ են, որոնք նպաստում են աշակերտների ճանաչողական գործունեությունը: Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: ԱՌԻՄ-ը բնութագրվում է աշակերտների ակտիվության բարձր մակարդակով<sup>12</sup>: Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական-արտադրական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորությունները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից: ԱՌԻՄ-ը – մեթոդներ են, որոնք մատուցվող կրթական նյութերի յուրացման գործընթացում ապահովում են ուսանողների ակտիվությունը, մտածական և պրակտիկ գործունեության

---

<sup>12</sup> Балаев А.А. Активные методы обучения. М., 2006. с 4

բազմազանությունը: ԱՌԻՄ-ը հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, ուսանողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա: ԱՌԻՄ-ի կրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա: Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

- Ուսումնական դրական խթանի ձևավորում,
- Աշակերտների ճանաչողական ակտիվության բարձրացում.
- Կրթական գործընթացին աշակերտների ակտիվ ներգրավում.
- Ինքնագործունեության խթանում,
- Ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,
- Աշակերտի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,
- Աշակերտի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում,
- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

Ակտիվ ուսուցումը ուսուցիչների և աշակերտների միջև փոխգործակցություն է, որտեղ ուսուցիչները և աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ, և սովորողները այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձը ուսուցիչն էր, ապա այստեղ ուսուցիչ-աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա են՝ սուբյեկտ սուբյեկտային փոխհարաբերություններ: Պասիվ ուսուցումը ենթադրում է ուսուցում ավտորիտար ոճով, իսկ ակտիվ ուսուցումը ժողովրդավարական ոճով:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Մեր կողմից կատարված տեսական ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

- Ուսումնասիրելով ուսուցման ժամանակակից մեթոդները մենք տեսանք, որ դրանք ունեն ուսուցանող և աշակերտներին ուսումնական գործընթացի մեջ ներգրավող բնույթ,
- Ուսուցման մեթոդը դասավանդողի և դասավանդվողի կարգավորված, փոխկապակցված գործունեության եղանակ է , գործունեության ճանապարհ՝ ուղղված ուսուցման գործընթացում դրված նպատակների իրականացմանը, խնդիրների լուծմանը:
- Յուրաքանչյուր մեթոդ ունի իրեն բնորոշ առանձնահատկությունները, որոնք իրենց հերթին ավելի հետաքրքիր են դարձնում ուսումնական գործընթացը: Աշակակերտները հաճույքով են մասնակցում դասերին և մեծ ակտիվություն են ցուցաբերում:
- Մեթոդի դասակարգումը և նկարագրումը կարելի է կառուցել այնպես, որ՝ դրանք կարելի լինի կիրառել ցանկացած դասընթացի դասավանդման ժամանակ, դրանց ընտրությունը հնարավոր լինի կատարել ուսուցման և դիդակտիկ խնդիրների նպատակներին համապատասխան:
- Տարրական դպրոցում առաջնային է համարվում ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, քանի որ կրտսեր դպրոցական տարիքում երեխաները գործնական աշխատանքները ավելի լավ են մտապահում,

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս. «Մանկավարժություն» Երևան 2005թ.
2. <<Գործիմաց մոտեցումը կրթական գործընթացում>> էջ 87-99
3. Գ.Ե.Ղույումչյան, «Մանկավարժություն», գիրք 1-ին, Երևան, 2005 թ. էջ 14
4. Հայկ Պետրոսյան «Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ» Երևան 2012թ. էջ 145, 188, 191-192:
5. Սերգեյ Մանուկյան «Մանկավարժագիտություն» Երևան 2002թ.
6. Алехин А.Ю. Общие методы обучения в школе. — К.: Радянська школа, 1983.
7. Анцибор М.М. Активные формы и методы обучения. Тула 2002
8. Балаев А.А. Активные методы обучения. М., 2006. с 4
9. Выготский Л.С. Педагогическая психология.
10. Давыдов В. В. Теория развивающего обучения. — М.: ИНТОР, 1996.
11. Загвязинский В. И. Теория обучения: Современная интерпретация: Учебное пособие для вузов. 3-е изд., испр. — М.: Академия, 2006.
12. Краевский В. В., Хуторской А. В. Основы обучения: Дидактика и методика. Учеб. пособие для студ. высш. учеб. заведений. — М.: Издательский центр «Академия», 2007.
13. Ляудис В. Я. Методика преподавания психологии: Учебное пособие. 3-е изд., испр. и доп. - М.: Изд-во УРАО, 2000.
14. Михайличенко О.В. Методика преподавания общественных дисциплин в высшей школе: учебное пособие. – Сумы: СумДПУ, 2009.
15. Педагогика: Учеб. пособие для студентов пед. ин-тов / Под ред. Ю.К.Бабанского. — 2-е изд., доп. и перераб. — М.: Просвещение, 1988.
16. Смолкин А.М. Методы активного обучения. М., 1991